

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Խաչատուր Նորեյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 13.12.2016թ. թիվ 41 որոշմամբ  
(նիստի ամսաթիվը)

Ն. Բազմաբերդ 2017թ.

## Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....**Ошибка! Закладка не определена.**
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....**Ошибка! Закладка не определена.**
  - 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն ..... **Ошибка! Закладка не определена.**
  - 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը ..... **Ошибка! Закладка не определена.**
  - 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը ..... **Ошибка! Закладка не определена.**
  - 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները..... **Ошибка! Закладка не определена.**
  - 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ ..... **Ошибка! Закладка не определена.**
  - 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն..... **Ошибка! Закладка не определена.**
4. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում .....**Ошибка! Закладка не определена.**
  - 4.1. Համայնքի զարգացման տեսլական..... **Ошибка! Закладка не определена.**
  - 5.1. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ ..... **Ошибка! Закладка не определена.**
6. ՀՀԶԾ ֆինանսավորում.....**Ошибка! Закладка не определена.**
7. ՀՀԶԾ մոնիթորինգ .....**Ошибка! Закладка не определена.**

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Ներքին Բազմաբերդի համայնքի ղեկավարը ողջունում է Ներքին Բազմաբերդի ազգաբնակչությանը 2017 – 2021թթ մշակված ծրագրի ընդունման և իրագործման կապակցությամբ: Հնգամյա ծրագրի հիմքում ընկած է համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի և դիրքորոշումների փոխհամաձայնեցված դրույթները, համայնքի զարգացման ուղղությունների վերաբերյալ, որոնք վերաբերվում են ավանդական մշակաբույսերի մշակության և անասնապահության զարգացմանը, ինչպես նաև նախադպրոցական կրթության և համայնքային այլ ծառայությունների մատուցման զարգացմանը:

Ներքին Բազմաբերդ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը /այսուհետ Հ Ջ Հ Ծ/ նախատեսված է զարկ տալ բուսաբուծության, անասնապահության զարգացմանը: Հետևողական բարեփոխումների շնորհիվ համայնքը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և գեղեցիկ բնակավայր: Վերը նշված տեսլականին հասնելու համար համայնքի ՏԻՄ-երը և աշխատակազմը իրականացնելու են այնպիսի ռազմավարական գործունեություն, որի շնորհիվ կբարելավվեն համայնքի բնակչության սոցիալ- տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, կընդլայնվեն համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակները: Բնակչությանը կիրազեկվի որոշումների կայացումը և կապահովվի նրանց մասնակցությունը: Իրագեկումը իրականացվելու է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի միջոցով:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

ՀՀ Արագածոտնի մարզի Ներքին Բազմաբերդ համայնքը կազմավորվել է 1922 թվականին: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1550 մետր բարձրության վրա:

Համայնքի վարչական տարածքը 5185,7 հեկտար է :

Գյուղի աշխարհագրական դիրքը շատ նպաստավոր է: Կլիման հիմնականում չորային է, տեղումները առատ են միայն գարնանը: Տեղումները լինում են կարկտահարության տեսքով՝ ուժեղ քամիների առկայությամբ: Համայնքի հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, որին շատ հաճախ վնաս է պատճառում երաշտը: Ռոզման ջրի ոչ լրիվ ապահովվածության պատճառով գյուղացին հողից ստանում է չնչին բերք:

Անասնակերը ձեռք է բերվում գնման ճանապարհով, որի պատճառով անասունին լիարժեք կերաբաժին չի հասնում, ըստ այդմ էլ մթերատվությունը շատ ցածր է:

Գյուղում չկա ոչ մի արտադրամաս, որի պատճառով ազգաբնակչության զգալի մասը աշխատազուրկ են: Արտագնա աշխատանքի մեկնողների թիվը աճում է, վերջինս վտանգ է արտագաղթին:

Համայնքապետարանը պահպանում է աշխատակիցների և ենթակայության տակ եղած ձեռնարկությունների աշխատակիցներին: Մսուր-մանկապարտեզի աշխատակիցների աշխատավարձը / վեց ամիս / ֆինանսավորվում է համայնքապետարանի կողմից:

Գյուղում առկա են փախստականների երեք ընտանիք, որոնք ապահովված են բնակարանով:

Գյուղի երիտասարդությունը ձգտում ունի բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու: Բնակչությունը պատրաստակամ է աջակցելու համայնքապետարանի աշխատանքներին և կենցաղային պայմանների բարելավմանը:

## 2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն – 40278,1 դրամ, որից սեփական եկամուտների բյուջեն կազմում է 6905,0 դրամ, այսինքն ընդհանուր բյուջեի 17%

- Ներքին Բազմաբերդ համայնքի ինքնակառավարման մարմինները

Համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը -10

Համայնքի ավագանու անդամները – 7

- Համայնքի ենթակայության տակ գտնվող - Մշակույթի տուն

Աշխատակիցների թվաքանակ -3

- Համայնքի ենթակայության տակ գտնվող- Գրադարան

Աշխատակիցների թվաքանակը - 2

- Դպրոցական հաստատություն - 1

<<Ն. Բազմաբերդի Եսայի Ասատրյանի անվան հիմնական դպրոց >> ՊՈԱԿ:  
Նախատեսված է 530 հոգու համար:

Աշխատակիցների թվաքանակը – 39

Աշակերտների թվաքանակը – 216 աշակերտ

- Առողջապահական հաստատություն – 1

<<Ն. Բազմաբերդ բժշկական անբուլատորիա >> ՀՈԱԿ

Սպասարկում է մոտակա 9 համայնքներին:

Տարեկան այցելուների քանակը 6000 մարդ:

Աշխատակիցների թվաքանակը – 19

- Նախադպրոցական հաստատություն – 1

<< Ն. Բազմաբերդի մսուր – մանկապարտեզ>> ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը -12

Նախադպրոցականների թվաքանակը - 60 երեխա

Ընտանեական նպաստների համակարգում գրանցված են – 62 ընտանիքներ

### ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ներքին Բազմաբերդ համայնքի բնակչության քանակը, սեռատարիքային կազմը

ԲՆԱԿԶ. ՍՈՑԻԱԼ. ԿԱԶՄԸ ԹՎԱՔԱՆԱԿԸ Կին Տղամարդ

Բնակչությունը 1620 804 816

0-6 տարեկան 121 55 66

7-15 տարեկան 179 85 94

16-18 տարեկան 58 25 33

19 – 62 տարեկան 1082 532 550

63 և բարձր 180 107 73

Աշխատունակներ 1082 382 700

Թոշակառուներ 250

Հաշմանդամներ 74

Միակողմանի ծնողագուրկ 7

Արցախյան ազատամարտիկ /վիրավոր/ 5

Փարոսում գրանցվածներ 62

Գրանցված ընտրողներ 1183

Ընտանիքների թիվը 397

Ջբաղվածներ 720

Բնակարանի կարիքավոր ընտանիքներ 80

Բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ընտանիքներ 70

- ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ-ի թիվ 51 որոշմամբ: Համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների վիճակի գնահատումը:

Հ/հ	Կառույց	Հասցեն	Կառուցման տարեթիվ	Չափի միավորը	Մակերես	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման / վերականգնման / փոխարինման կարիք
1.	Սշակույթի տուն	Փողոց1 նրբ.2 շենք 1	1972	մ <sup>2</sup>	912,48	բավարար	Վերանորոգման
2.	Խմելաջիր ՕԿՋ	-	1991	հատ /3/ մ <sup>3</sup>	1300	բավարար	Վերանորոգման
3.	Հին հիվանդանոց շենք	Փողոց 2 նրբ. 2 շենք 2	1936	մ <sup>2</sup>	364,99	անբավարար	Օտարման ենթակա
4.	Մանկապարտեզի շենք / կիսակառույց/	Փողոց 26 շենք 1	1989	մ <sup>2</sup>	568,61	Անավարտ /կիսաավեր/	Կառուցման
5.	Գերեզմանոց		1922	հա	5,1	անբավարար	Ցանկապատի վերանորոգում
6.	Հուշարձան /Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների/		1975	հա	0,1	լավ	-
7.	Խմելու ջրի ջրագիծ		1996	կմ	7	բավարար	Պարբերական վերանորոգումներ
8.	Ոռոգման ջրի ցանց			կմ	15	անբավարար	Վերանորոգման
9	<<Ն.Բազմաբերդ բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ	Փողոց 1 շենք 13	1991	մ <sup>2</sup>	800	լավ	ոչ

- ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի տարածքում գործում են փոստը և համայնքի անհատ ձեռներեցների կողմից շահագործվում են 5 խանութներ: Համայնքում գործում է «Ն. Բազմաբերդ -1 ԳԱՍԿ» և <<Ն. Բազմաբերդ արոտօգտագործողների միավորում>> սպառողական կոոպերատիվը:

- ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը չունի գլխավոր հատակագիծ, որի պատճառը ֆինանսական միջոցների բացակայությունն է:

Կենցաղային աղբի կուտակման համար համայնքից մոտ 3 կմ հեռավորության վրա առանձնացված է ցանկապատված տարածք, որտեղ տեղափոխվում է համայնքի աղբը, որը հավաքվում է ամսական չորս անգամ:

- ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը	5185.7 հա, որից՝
Բնակավայրի տարածքը	220.0 հա
այդ թվում՝ կառուցապատվածը	204.0 հա
Հեռագնա արոտներ /տրված է համայնքին անհատույց օգտագործման իրավունքով/	
Վարելահողեր	502.3 հա
Խոտհարքներ	
Արոտավայրեր	3930.1 հա
Այգեգործական ամառանոցային	86,5 հա
Սեփականաշնորհված հողեր	680.7 հա
Մեկ հողաբաժնի չափը՝	0.82 հա
Դպրոց	1.16 հա
Հուշարձան	0.01 հա
Գերեզմանոց	5.1 հա

Վարձակալությամբ է տրված մոտ 2 հա վարելահող և 700 հա արոտավայր և համայնքային նշանակության:

- ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքով է անցնում Երևան – Գյումրի դեպի Վրաստան տանող միջպետական ճանապարհը : Ներհամայնքային ճանապարհները հիմնականում գրունտային են /մի մասը խճապատ/, որոնց ընդհանուր երկարությունը մոտ 15 կմ է: Ասֆալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 2,7 կմ: Դաշտային ճանապարհները հողային են, որոնց վիճակը բավարար չէ:

- ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են անհատ ձեռներեցների պատկանող 5 խանութներ, որոնք հիմնականում փոքր խանութներ են և զբաղվում են խառը ապրանքների /սնունդ, հագուստ, տնտեսական ապրանքներ և այլն/ վաճառքով: Համայնքում գործող գրանցված ծառայություններ /վարսավիրանոց, կոշկակարանոց և այլն/ չկան: Ցանկալի է, որ համայնքը ունենա վերոհիշյալ ծառայություններ:

- ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքի մշակույթի տունը գործում է մշտապես, որը և մեծապես նպաստել է կուլտուր - մշակութային կյանքի ակտիվացմանը: Մշակույթի տունն ունի գույքի և այլ պարագաների անհրաժեշտություն: Գործում է երգի, պարի և թատերական խմբակներ: Համայնքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ նվիրված հիշարժան օրերին:

«Վորլդ վիժեն» բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով հիմնվել է տիկնիկային թատրոն:

- ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ՋԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի մանկապարտեզի բակում տեղադրված են մանկական կարուսելներ, ճոճանակներ և այլն: Որպես հանգստյան գոտի ծառայում է ամառային 2 տաղավարներ, որոնք տեղադրված են համայնքի վարչական տարածքում: Համայնքը ունի ֆուտբոլի դաշտ, որտեղ պարբերաբար անց են կացվում ֆուտբոլային խաղեր:

- ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքային կարևորագույն հարցերի լուծումը իրականացվում է ավագանու միջոցով բնակչության շրջանում իրականացվող հարցազրույցների և հանդիպումների ընթացքում արված առաջարկությունների հիման վրա: Առավել ծավալուն և կարևորագույն հարցերի լուծման համար գումարվում են համայնքային ժողովներ:

Հանրային լսումների և քննարկումների արդյունքում է ընդունվել 2017թվականի բյուջեն:

- ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ



Համայնքում ռիսկային է համարվում տարերային աղետները /կարկուտ, ուժեղ քամիներ, ձնաբքեր, ցրտահարություններ, երաշտներ և այլն/:

7

- ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ, ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՌՄԱՆ ՇՈՒԿԱԼՆԵՐԸ :

Բուսաբուծության բնագավառում հիմնական արտադրանքը հացահատիկային կուլտուրաներից ցորենն է ու գարին:

Համապատասխան տեխնիկա չունենալու և անհրաժեշտ քանակի ոռոգման ջրի չունենալու պատճառով մեկ հեկտարից ստացվում է 10 ցենտներ հացահատիկ, որը տրամադրվում է որպես անասնակեր:

Անասնապահության բնագավառում գյուղում կա 300 գլուխ կով, որի միջին կաթնատվությունը չի գերազանցում 1200 լիտրը: Մսի և կաթի արտադրությունը հազիվ բավարարում ազգաբնակչության պահանջները: Բնամթերքի և պտղի չնչին ավելցուկով կատարվում է ապրանքափոխանակություն գյուղացին արտաքին շուկա դուրս չի գալիս:

## 2.5 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման ուղղություններն են գյուղատնտեսությունը /դաշտավարությունը և անասնապահությունը/ :

Համայնքի զարգացման համար կարևոր է մեծ աշխատուժի առկայությունը և՛ բուհական, և՛ միջին մասնագիտական կրթության մասնագետների մեծ թիվը համայնքում:

- Համայնքին սպառնացող հիմնական վտանգները

ա. Տարերային աղետները:

բ. Բնակչության սոցիալ-տնտեսական վատ վիճակը, որը հիմք է ծառայում արտագաղթի և գործազրկությանը:

գ. Խմելաջրի ներքին ցանցի մաշվածությունը:

դ. Գյուղատնտեսական մեքենաների բացակայությունը:

ե. Ոռոգման ջրի /պոմպակայանից ստացվող/ պետության կողմից սուբսիդավորման անբավարար վիճակը:

Պոմպակայանի շարժիչի հզորությունը 800 կվ ժամ է 470 մ բարձրության մղման: Q -ն 75 լ վարկյան է, սակայն օ գ գ-ն /0,7 / 52.5 լ /վրկ: 800 կվտ /ժ x 24 x 42 = 806,400 դրամ:

1 մ<sup>3</sup>- ի արժեքը կազմում է 179,2 դրամ: Պետության կողմից սուբսիդավորումը կազմում է մոտավորապես 20.000000 դրամ:  $20.000000 \div 179,2 = 112000$  մ<sup>3</sup> ջուր, որը ապահովում է մոտավորապես 100 հա տնամերձ հողամասերի 1 անգամվա ոռոգման: Համայնքը ունի ոռոգման ենթակա 220 հա տնամերձ հողամաս և 344 հա սեփականաշնորհված վարելահող:

### 2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

	Ծրագրի անվանումը	Չափի միավոր	Ծրագրի ծավալը	Ծրագրի արժեքը հազ. դր.	Ծրագրի կատարումը ըստ տարիների				
					2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
1	Խմելաջրի ներքին ցանցի վերանորոգում	կմ	5	20000.0	4000.0	4000.0	4000.0	4000.0	4000.0
2	Ներհամայքային ոռոգման ցանցի վերանորոգում /արևելյան թաղամաս/	կմ	1,2	6000.0	2000.0	4000.0	-	-	-
3	Ներհամայքային ոռոգման ցանցի ՊՔ-40 կապիտալ շինարարություն արևելյան և արևմտյան թաղամասեր	կմ	2	45000.0	-	20000.0	25000.0	-	-
4	Փողոցների ասֆալտապատում	մ <sup>2</sup>	18000	144000.0	28000.0	28000.0	28000.0	28000.0	32000.0
5	Դպրոցի հանդիսությունների դահլիճի և հարակից սենյակների վերանորոգում պատուհանների և դռների փոփոխում		դռներ 10մ <sup>2</sup> պատուհաններ 40մ <sup>2</sup> հարդարման աշխատանքներ	9000.0	4000.0	5000.0	-	-	-

6	Մանկապարտեզի կոսմետիկ վերանորոգում, խաղահրապարակների կահավորում, հատակի վերանորոգում		կոսմետիկ վերանորոգում 900մ <sup>2</sup> հատակ 260մ <sup>2</sup>	4000.0	2000.0	2000.0	-	-	-
7	Արտոնների ջրարբիացում	կմ	7	90000.0	50000.0	40000.0			
8	Տեխնիկայի ձեռքբերում /կոմբայն, տրակտոր, կուլտիվատոր, խոտհնձիչ/	միավոր	15	50000.0	50000.0	-	-	-	-
9	Կաթի ընդունման և մշակման կետի ստեղծում	հատ	1	40000.0	40000.0				
10	Կուլտուրայի տան վերանորոգում	հատ	1	60000.0		30000.0	30000.0		
11	Գերեզմանոցի ցանկապատում, ընդլայնում և վերանորոգում	մ	1300	5000.0	-	1000.0	1000.0	1000.0	2000.0
12	Ն. Սաննաշենի ջրամբարից մինչև պոմպակայանի թափման կետ միջհամայնքային ոռոգման ջրատարների կապիտալ վերանորոգում	կմ	2,4	66000.0	-	-	-	33000.0	33000.0
13	Փողոցների գիշերային լուսավորություն	կմ	5	30000.0	6000.0	6000.0	6000.0	6000.0	6000.0
14	Խելաջրի կապտաժների վերանորոգում	հատ	4	6000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	2000.0
15	Խնելաջրի ՕԿԶ-ի վերանորոգում	հատ	3	3000.0	500.0	500.0	500.0	500.0	1000.0
16	Քլորակայանի կահավորում և վերանորոգում	հոր	1	2000.0	-	-	2000.0	-	-
17	Գազաֆիկացում	կմ	7	550000.0	100000.0	200000.0	250000.0		
18	Խաղահրապարակների ստեղծում /բակային ճամբար/	հատ	1	3000.0	-	1000.0	2000.0	-	-
19	Վարչական շենքի կառուցում	հատ	1	60000.0	-	30000.0	30000.0	-	-

• Պետության կողմից իրականացվող ծրագրերի ազդեցությունը համայնքի վրա

ա. Կարգական շենքի կառուցման դեպքում կստեղծվի հարմարավետություն համայնքապետարանի գործունեության համար:

բ. Գազաֆիկացումը վերջնականապես կլուծի ազգաբնակչության վառելիքի և կոմունալ - կենցաղային բարենպաստ պայմաններ կստեղծի:

գ. Փողոցների գիշերային լուսավորումը մատչելի կդարձնի ազգաբնակչության շարժը և բնակավայրի տեսքի փոփոխություն կառաջացնի:

դ. Փողոցների ասֆալտապատումը երթևեկելի կդարձնի բնակավայրի փողոցները հատկապես ձմեռային շրջանում:

ե. Ն. Սասնաշենի ջրամբարից մինչև պոմպակայանի թափման կետ միջհամայնքային ոռոգման ջրատարների կապիտալ վերանորոգման դեպքում ոռոգման ջրի կորուստը կնվազի, որի հաշվին կավելանա ոռոգվող հողերի քանակը, որը և կնպաստի գյուղ-մթերքների արտադրության աճին:

զ. Կաթի ընդունման և մշակման կետի ստեղծումը կնպաստի նոր աշխատատեղերի բացմանը:

## 2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Համայնքի ուժեղ կողմերը

ա. Համայնքում մեծ թիվ են կազմում բարձրագույն կրթություն ունեցողները:

բ. Միջպետական մայրուղին անցնում է համայնքի մոտակայքով և հնարավորություն է տալիս համայնքի բնակիչներին հաղորդակցվելու և առևտուր անելու Երևան և Գյումրի քաղաքներում:

գ. Աշխատատեղեր ստեղծելու նպատակով կարելի է օգտագործել գյուղից 2,5-3 կմ հեռավորության վրա գտնվող քարհանքը:

դ. Խմելաջրի մատակարարումը կենտրոնացված է, և ինքնահոս կերպով ապահովված է ողջ գյուղը:

ե. Գյուղում կա կիսակառույց եկեղեցի և 1941-1945թթ. հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան:

զ. Գյուղում գործում են «Ն. Բազմաբերդ 1» ԳԱՍԿ կոոպերատիվը և «Ն, Բազմաբերդ համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվը:

- Համայնքի թույլ կողմերը

ա. Համայնքը չունի անհրաժեշտ քանակությամբ ոռոգման ջուր:

բ. Մեծ է բնակարանի կարիք ունեցողների թիվը:

գ. Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:

դ. Բարձր է գործազրկության մակարդակը:

ե. Գյուղը գազաֆիկացված չէ:

զ. Հողերի ոչ բավարար մշակման և պարբերաբար կրկնվող բնակլիմայական աղետների հետևանքով գյուղացու եկամուտները շատ ցածր են:

է. Գյուղամիջյան փողոցները անբարեկարգ վիճակում են և բացակայում է լուսավորությունը:

### 3. ՀԱՄԱՅՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Համայնքում իրականացվելու է այնպիսի համայնքային քաղաքականություն, որի շնորհիվ հետևողականորեն կբարելավվեն համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, կընդլայնվեն համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակները և կբարձրացվի դրանց հասանելիությունն ու մատչելիությունը, դրա համար կստեղծվեն նպաստավոր պայմաններ: Կյանքի են կոչվելու պատշաճ կառավարման սկզբունքները: Հատկապես շեշտը դրվելու է տեղական ժողովրդավարության ամրապնդման, հիմնախնդիրներին արձագանքելու պատրաստակամության, հրապարակայնության և թափանցիկության, անբասիր վարքի ապահովման, հստակ ֆինանսական կառավարման, սոցիալական միասնության ապահովման, բնակչությանը իրազեկման, որոշումների կայացմանը բնակիչների մասնակցության ապահովման և հաշվետվողականության բարձրացման մեխանիզմների ներդրմանը և հետևողականորեն դրանց իրականացմանը:

### 31. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Ներքին Բազմաբերդի համայնքի տեսլականն է՝

Հետևողական բարեփոխումների շնորհիվ համայնքը դարձնել բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր, բարելավ ապագայի հասնելու համար բարձրացնել կրթության, մշակութային մակարդակը, զարգացնել գյուղատնտեսությունը, ավանդական մշակաբույսերի մշակություն, անասնապահություն, գյուղական ապրանքների վերամշակումը:

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հնգամյա ժամկետում բարեփոխումներ կատարելով նախատեսվում է համայնքում հասնել հետևյալ հիմնական նպատակներին`

- Նախադպրոցական կրթության զարգացում:
- Կրթական և մշակութային ոլորտի բարելավում և կրթօջախի բարեկարգում:
- Բուսաբուծության և անասնապահության զարգացում:
- Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման կազմակերպում, ջերմոցային տնտեսության հիմնում:
- Համայնքային ծառայությունների մատուցման բարելավում:
- Համայնքի բնակչության մշակութային կյանքի, սպորտի և հանգստի կազմակերպում:
- Ազգաբնակչության փոստային ծառայությունների ապահովում, պայմանների բարելավում:
- Գործարար միջավայրի բարելավում:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 2. Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. Բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հ/հ	Մուտքերի անվանումը	հազար դրամ						
		2015թ. Փաստ.	2016թ. Նախա	2017թ. Կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ` ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	45486,2	42901,3	40431,1	42715,0	43655,0	44995,0	47035,0
1.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	38717,0	37685,2	37331,1	38515,0	38905,0	40695,0	42185,0
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	5171,0	5301,6	4941,0	4985,0	5045,0	5115,0	5185,0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	2450,0	2461,0	2015,0	2015,0	2015,0	2015,0	2015,0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	60,0	61,0	65,0	65,0	65,0	65,0	65,0
	Հողի հարկ	2390,0	2400,0	1950,0	1950,0	1950,0	1950,0	1950,0

1.2	Գույքային հարկեր այլ գույքից	2414,0	2580,0	2618,0	2650,0	2700,0	2750,0	2800,0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար							
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	307,0	260,0	308,0	320,0	330,0	350,0	370,0
	Տեղական տուրքեր	307,0	260,0	308,0	320,0	330,0	350,0	370,0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր	-	-	-	-	-	-	-
1.5	Այլ հարկային եկամուտներ							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ	-	-	-	-	-	-	-
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՉՆԵՐ	28245,3	29484,2	30423,1	31430,0	32160,0	33180,0	34200,0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							

ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	27962,3	29376,2	30273,1	31280,0	32000,0	33000,0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	283,0	108,0	150,0	150,0	160,0	180,0
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	-	-	-	-	-	-
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ						
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	-	-	-	-	-	-
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)						
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ						
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	6800,7	2900,0	7057,0	8100,0	8700,0	9400,0
3.1	Տոկոսներ						

3.2	Շահաբաժիններ						
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	4681,0	2100,0	1367,0	1400,0	1500,0	1600,0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	4681,0	2100,0	1367,0	1400,0	1500,0	1600,0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	-	-	-	-	-	-
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ						
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր						
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում						
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ						
3.5	Վարչական գանձումներ						
	Տեղական վճարներ						
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ						
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ						
3.6	Մուտքեր սույժերից, սուզանքներից						
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ						



